ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻԱՋԱԿՑՄԱՆԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«9» հունվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-126/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 23.12.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար 2016թ. նոյեմբերի 25-ին «Բժշկական սարքավորումների և պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/40» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2016թ. շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ Ընկերությունը չի բավարարել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 67-րդ կետի 3-րդ մասի դրույթներին, որի հիման վրա Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը, որպես բողոքի փաստացի հիմք /ապացույց/, վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Որպես բողոքի իրավական հիմք՝ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհրդին ներայացնելով համանման բողոք:

Ընկերությունը հայտնել է, որ սույն թվականի դեկտեմբերի 12-ին միաժամանակյա բանակցությունների ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին, 15-րդ և 18-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է որոշվել «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ. և 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը, ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն, կազմել է՝

1. 2013թ.- ընդամենը համախառն եկամուտ՝ 4,036,345 ՀՀ դրամ:
2. 21014թ. - ընդամենը համախառն եկամուտ՝316,793 ՀՀ դրամ:

3. 2015թ. - ընդամենը համախառն եկամուտ՝ 12, 593,853 ՀՀ դրամ:

Սակայն 2015թ. համախառն եկամտի մեջ ներառված չէ 110,758,406 ՀՀ դրամը, որը ստացվել է «Յունիմեդ» հայ ռուսական ՀՁ ՍՊԸ-ի և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի կողմից համատեղ իրականացրած «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից կազմակերպված թիվ CR4/ICB/B-G/008-15 միջազգային մրցույթի շրջանակներում կնքված CR4/B-G/008-15 պայմանագրով մատակարարված ապրանքների գումարից: ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի պահանջով փաստաթղթերի դյուրին աշխատանքների կազմակերպման համար պետք է նշված ՀՁ-ից ընտրվեր մեկ մասնակից և դա եղել է համատեղ ձեռնարկության անդամ «Յունիմեդ» հայ ռուսական ՀՁ ՍՊԸ-ն և վերջինս էլ կնքել է ընդունման-հանձնման ակտը:

Ընկերությունը գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացված բողոքով խնդրել է՝

1. չեղյալ հայտարարել գնահատող հանձնաժողովի 16.12.2016թ. շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և Ընկերությանը ճանաչել հաղթող մասնակից այն չափաբաժինների մասով, որոնցով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, եթե մասնակցի ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.12.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-126/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը և հայտնել է, որ Ընկերությունը պարզաբանում ստանալու նպատակով 28.12.2016թ. դիմում-նամակ է ուղղել ՀՀ ֆինանսների նախարարին, որտեղ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ Ընկերության 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 12 593 853 ՀՀ դրամ, սակայն 2015թ. համախառն եկամտի մեջ ներառված չէ 110,758,406 ՀՀ դրամը, որը ստացվել է «Յունիմեդ» հայ ռուսական ՀՁ ՍՊԸ-ի և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի

կողմից համատեղ /հարկերի մասին ՀՀ օրենքի 6.1 հոդվածի և շահութահարկի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի իե) պարբերության համաձայն՝ եկամուտների թվին է դասվում, մասնավորապես՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1 հոդվածով սահմանված կարգով հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից հայտարարված թիվ CR4/ICB/B-G/008/-15 միջազգային մրցույթի շրջանակներում աշխատանքների դյուրին կազմակերպման համար պետք է նշված ՀՁ-ից ընտրվեր մեկ մասնակից և դա եղել է համատեղ ձեռնարկության անդամ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն և ընդունման-հանձնման ակտը կնքել է վերջինս: Հետևաբար 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 123 352 259 ՀՀ դրամ:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 23.12.2016թ. բողոքի վերաբերյալ չի ներկայացրել իր դիրքորոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.12.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-126/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-126/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-126/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Բժշկական սարքավորումների և պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 05.12.2016թ. հայտ է ներկայացրել «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

3. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 14, 15, 17, 18, 19 և 21-րդ չափաբաժինների համար, որից ամենաբարձրի՝ 1-ին չափաբաժնի ընդհանուր գինը կազմել է ***54 600 000 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2016թ. որոշմամբ «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1, 15 և 18-րդ չափաբաժինների մասով:

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 12.10.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ ***«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն 05.10.2016թ. նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014., 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 16 946 991 ՀՀ դրամ:***

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժել է՝

պատճառաբանելով, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է հայտով ներկայացված գնային առաջարկից:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.12.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-126/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը պարզաբանում ստանալու նպատակով 28.12.2016թ. դիմում-նամակ է ուղղել ՀՀ ֆինանսների նախարարին, որտեղ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ Ընկերության 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 12 593 853 ՀՀ դրամ, սակայն 2015թ. համախառն եկամտի մեջ ներառված չէ 110,758,406 ՀՀ դրամը, որը ստացվել է «Յունիմեդ» հայ ռուսական ՀՁ ՍՊԸ-ի և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի կողմից համատեղ /հարկերի մասին ՀՀ օրենքի 6.1 հոդվածի և շահութահարկի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի իե) պարբերության համաձայն՝ եկամուտների թվին է դասվում, մասնավորապես՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1 հոդվածով սահմանված կարգով հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից հայտարարված թիվ CR4/ICB/B-G/008/-15 միջազգային մրցույթի շրջանակներում աշխատանքների դյուրին կազմակերպման համար պետք է նշված ՀՁ-ից ընտրվեր մեկ մասնակից և դա եղել է համատեղ ձեռնարկության անդամ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն և ընդունման- հանձնման ակտը կնքել է վերջինս: Հետևաբար 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 123 352 259 ՀՀ դրամ:

9. Սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ Ընկերության կողմից չի ստացվել և Կենտրոնին չի ներկայացվել «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 28.12.2016թ. գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան պատասխանը:

4. ԳԲԽ-126/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 23.12.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), Պատվիրատուին ուղղված ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2016թ. եզրակացությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 23.12.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված

որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Բժշկական սարքավորումների և պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության 05.12.2016թ. հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 14, 15, 17, 18, 19 և 21-րդ չափաբաժինների համար, որից ամենաբարձրի՝ 1-ին չափաբաժնի ընդհանուր գինը կազմել է ***54 600 000 ՀՀ դրամ:***

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 12.10.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ ***«Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն 05.10.2016թ. նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014., 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 16 946 991 ՀՀ դրամ:***

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ պատճառաբանելով, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է հայտով ներկայացված գնային առաջարկից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.12.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-126/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ Ընկերությունը պարզաբանում ստանալու նպատակով 28.12.2016թ. դիմում-նամակ է ուղղել ՀՀ ֆինանսների նախարարին, որտեղ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ Ընկերության 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 12 593 853 ՀՀ դրամ, սակայն 2015թ. համախառն եկամտի մեջ ներառված չէ 110,758,406 ՀՀ դրամը, որը ստացվել է «Յունիմեդ» հայ ռուսական ՀՁ ՍՊԸ-ի և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի կողմից համատեղ /հարկերի մասին ՀՀ օրենքի 6.1 հոդվածի և շահութահարկի մասին

ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի իե) պարբերության համաձայն՝ եկամուտների թվին է դասվում, մասնավորապես՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1 հոդվածով սահմանված կարգով հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից հայտարարված թիվ CR4/ICB/B-G/008/-15 միջազգային մրցույթի շրջանակներում աշխատանքների դյուրին կազմակերպման համար պետք է նշված ՀՁ-ից ընտրվեր մեկ մասնակից և դա եղել է համատեղ ձեռնարկության անդամ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն և ընդունման- հանձնման ակտը կնքել է վերջինս: Հետևաբար 2015թ. ընդամենը համախառն եկամուտը կազմել է 123 352 259 ՀՀ դրամ:

Կենտրոնը հայտնում է, որ սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ Ընկերության կողմից չի ստացվել և Կենտրոնին չի ներկայացվել «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» հայ-ֆրանսիական ՀՁ ՍՊԸ-ի 28.12.2016թ. գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան պատասխանը:

Այսպիսով, գործում առկա ապացույցները փաստում են, որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2016թ. տրված եզրակացության, Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014., 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմում է ***16 946 991 ՀՀ դրամ***, որը պակաս է Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկից, որից ամենաբարձրի՝ 1-ին չափաբաժնի ընդհանուր գինը կազմում է ***54 600 000 ՀՀ դրամ***: Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով չի բավարարում հրավերի պահանջներին, հետևաբար Կենտրոնը գտնում է, որ Ընկերության բողոքը այս մասով ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Ընկերության բողոքով ներկայացրած 2-րդ պահանջին՝ «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» ՀՁ ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից Ընթացակարգի այն չափաբաժինների մասով, որոնցով ճանաչվել է 1-ին տեղ

զբաղեցրած մասնակից, եթե մասնակցի ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերին, ապա Կենտրոնը հայտնում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նման որոշում կայացնելու լիազորություն չունի, ուստի այս մասով բողոքը ևս ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» ՀՁ ՍՊԸ-ի 23.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-126/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Գևորգյան